


ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 40 Մէճ.
Փառաւոյց . 2 խրա
Վեցամս. . Կ. Պոլսոյ . 3 Մէճ.
Փառաւոյց . 1 խրա
(տարեկան) . 50 Ֆր.
Մանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար զատ սահմանափակութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարսարծ :



ԼՐԱՔԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրա զնոցած լրագրաց ճանրու-
ած արք. Խմբագրութեան վրայ է :
Լրագրաց փրարեւելալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն Խմբագրի-
ց — Տնօրէնին ախար ուղղութիւն, զարա-
միս Կանտարժարար չհաստատուի թիւ
198, Նոյն խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրուած արք. չվճարուած նա-
մակ չընդունուի :
Չտպուած նամակ, յողում, ևն
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 51 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կիրակի օրն ազգային զգացումը
փառաւոր յաղթանակ մը տարաւ :
Հակահասունեան ազգայնոց մէկ մա-
սին Հայաստանեայց եկեղեցւոյ հետ
միասնաբար կրօնական գէպը մը չէ,
այլ միաբերու լուսաւորութեան և
ժամանակին անդամագրելի յառաջ-
դիմական միման արդիւնքն է :
Թուրքիոյ մէջ իւրաքանչիւր ազ-
գութիւն իւր եկեղեցիովը կանգուն
մնացած է. ուստի եթէ այսօր Հայ
ազգութիւնը մը կայ և իւր լեզուն,
պատմութիւնն և ազգային կենաց
ամեն նշաններն ու յատկութիւնն ու-
նի, տարակոյ չկայ որ Հայաստան-
եայց եկեղեցւոյ շնորհիւ պահուած
են : Հայն իւր եկեղեցւոյն կապողը
մոլեռանդութիւնը չէ, այլ դարերու
յիշատակը. բայց միանգամայն ան-
ցնելին կոչը սքանչալոյց չէ. գիտէ
որ մեծ սխալներ ալ գործուած են,
և անոնց դարմանը լուսաւորութեան
ու յառաջդիմութեան մէջ պէտք է
փնտռել : Ժամանակ մը՝ իբրեւ տը-
գիտութեան հետեւանք՝ բնաւ օրէնք
և կանոն չէր մնացած. ազգային ա-
ղետը ամեն բան անհետ ըրած էին :
Հայը մոռցած էր ինքզինքը, բայց
երբ սկսաւ իւր աչքը բանալ, իւր
անցեալ պատմութիւնն ուսնիլ, ներ-
կային և ապագային վրայ խորհել,
զգաց որ ներքին բարենորոգման մը
պէտք ունի, հետեւաբար իւր նախ-
նեայ ազատ աւանդութիւններուն
հետեւելով՝ Ազգային Մահմանդու-
թիւնը հաստատեց : Իւր ներքին
կեանքին սկսելով դործել, իւրա-
քանչիւրին պարտուց և իրաւանց
սահմանը գծեց, օրինաւորութիւն
մը վերահաստատեց, որպէսզի ներ-
քին զեղծումները վերնան ամեն բա-
նէ առաջ : Այս գործը մեծ էր, և
կարելի չէր որ անմիջապէս կատար-
եալ զարգացում՝ ընդունէր, բայց
տակաւ առ տակաւ յառաջ գնաց.
և թէպէտ դեռ բոլորովին կատարե-
լագործեալ չլինի, նոր սերունդը
սովորեցաւ զայն յարգել և անոր ըս-
կըզունքովը անանիլ. ազգային և
հասարակայ իր մը գոյացաւ, որոյ
մէջ ամեն Հայ կըգացայ թէ չաճ մ'ու-
նի : Ահա այս զգացումն է որ ազգ-
մը կը վերակենդանացնէ, անով իւ-
րաքանչիւր անգամ իւր պարտուց և
իրաւանց դործադրութեան կը մաս-
նակցի և ազգային ներդաշնակու-
թիւնն իւր բոլոր արդիւնքը կ'ար-
տադրէ :

Կեղեցին կրնայ աշխարհիս ամենէն
ուղղութեամբ լինիլ, բայց տակաւին
համակրութիւն չկայելէ համակրու-
թիւնը կուգայ իրաւունք յարգելով,
օրինաւորութիւնը սիրելով, զեղծում-
ներն ու բռնութիւնը վանելով, ար-
դարութիւնը պաշտպանելով, տակաւ
հզօրին չորհելով, վերջապէս այն ա-
մեն բաներով որք բարի և զեղեցիկ
են : Այս սկզբունքներն են որ հապէս
բարոյաբանութիւն և մանաւանդ բարե-
կերթ ընկերութիւն մը կը կազմեն :
Ուր որ ասոնք չեն յարգուիր, կազ-
մակերպեալ ընկերութիւն չկայ, այլ
տխուր քառու մը, ուր ամենայն ինչ
բաղդին և բիրտ զօրութեան թող-
ուած է, ուր իրաւունքն ու իմաս-
տասիրութիւնը գործ չունին, և որոյ
վրայ քաղաքակրթութիւնը ազգեր՝ լուսա-
ւորեալ միտքեր՝ չեն կրնար համակ-
րութեամբ նայիլ :
Ասկէ կը հետեւի որ համակրու-
թիւնը մի միայն վերոյիշեալ սկզբունց
վրայ կոյացած է. այսօր եթէ զանազ
յարգելով՝ օտարաց և մեր բաժան-
եալ ազգայնոց քով համակրութիւն
վայելել սկսած եմք, անոնց մոռացու-
մը կրնայ մեծ վնասներ ու կորուստներ
տալ : Պէտք է ջանալ ուրեմն ոչ մի-
այն ստացեալ համակրութիւնը պա-
հելու, այլ և ընդարձակելու. ժամա-
նակը դործելու կը պարտաւորէ ըզ-
մեզ, և ապագայն աշխատողներուն է :
Մեր տկարութիւնը կ'ստիպէ ըզ-
մեզ ներդաշնակաւոր համակրու-
թեան և միացման : Վաղուց մեր մէ-
ջէն հեռացուցած եմք կրօնական
վէճերն, և մեր բոլոր աշխատութիւ-
նը կը նուիրեմք և պէտք է նուիրեմք
ազգային կենաց և դարձեալ այնմ, որ
անհամար պէտքեր ունի տակաւին
յրացման կարօտ : Երբ ժամանակին
հետ առաջ երթամք, այն ատեն մի-
այն կարելի է լուսագոյն ապագայի
մ'ապաստել : Առանց բարոյաբանու-
թեան կրնամք ըսել թէ Հռոմի սխա-
լին է միշտ անցելոյն յարիլ, առանց
ներկային և ապագային պահանջում-
ները դոճ ընելու. նախորդ և այժմ-
եան Ս. Պապերուն կոնդակները լի-
վին հաստատեցին զայս : Ժամանա-
կին յառաջդիմութեան մերժումն
իւր պատիժն ունի. այն դրութիւն
ներն՝ սրբ ազգային զգացումն և իրա-
ւունք չեն յարգուիր, ներկայ դարուս
լուսաւորութեան առջև ընկերելու
վրայ են :

ՔՕՄԻՍԷՐԲ

(Մեր երկ կուան թիւէն Հարունակութիւն)

Մեր առաջին յօդուածին մէջ ը-
սինք թէ Հայաստան զրկուած փօմի-
սէրը միայն քննելու և տեղեկագրե-
լու արտօնութիւն ունենալով, գոր-
ծադրելու արտօնութիւն չունէին :

Այս առթիւ աւելորդ չլինիլ յիշել
թէ մինչդեռ մինչև մօտ ժամանակ-
ներս Եռսուֆ փաշային և Աղաբէկ-
եան էֆէնդիին «Ըտահաթ ֆօմիսէ-
րի» անունը կը տրուէր, վերջերս փա-
շին ձայնը փոխելով, «Հէյէթի Թէֆ-
թիլիյէ» այսինքն «Գննիչ յանձնա-
խումբ» անունը տրուիլ սկսած է ա-
նոնց՝ պաշտօնական գրութեանց մէջ :
Ուրիկից ետեւ այս վերջին անունը վեց
ամիս առաջ 'ի ձայն փողոց և թմբ-
կաց ծանուցանել թէ վէճ. Սուլթա-
նին խոտուածներն ի մօտոյ պիտի ի-
րանան, թէ Հայաստանի մէջ բարե-
նորոգումներ պիտի գործադրին, թէ
«Բոյահաթ ֆօմիսէրի» անուն հա-
մար կը զրկուին և այլն, բայց իրօք
անոնց հրահանգ տալ միայն քննելու
և տեղեկագրելու, և կէս տարի տեղ-
ներէ և ամեն բան եղածներէն հաս-
կըցունելէ ետեւ, յայտարարել թէ ա-
նոնք «Թէֆթիլի Մէմուր» միայն է-
ին, ստուգու չեմք կրնար մեկնու-
թիւն մը տալ այս բանին :
Բայց, ինչպէս ըսինք, թողունք
այս կէտն, ուր հակառակութեանը զի-
րար կըմղեն, և ինքզինքն աւելի հե-
տաքրքրական մէկ կոյով քննեմք :
Եղածներէն հակադրուած է թէ
կարնոյ և վանայ նահանգաց, այ-
սինքն Հայաստանի մեծ մասին և Տի-
արաքէրի նահանգին ֆօմիսէրներ-
ուն արուած հրահանգները նոյն
չէին : Մեր խօսքը չերկարելու հա-
մար չեմք ուղեր ապացոյցներով հաս-
տատել այն ճշմարտութիւնը թէ բա-
րենորոգման համար նոյն պէտքերը
կային կարնոյ և վանայ կողմերն և
Տիարաքէրի նահանգներն, և եթէ
կար տեղ մը ուր այդ պէտքերն աւե-
լի զգալի լինին, այն ալ Հայաստանն
էր : Յորմէ անհակառակելի կերպիւ
կը հետեւի թէ կամ ֆօմիսէրաց եր-
կու խումբն ալ միևնոյն արտօնու-
թիւններն ու միևնոյն իշխանու-
թիւնը պիտի ունենային, և կամ
կարնոյ և վանայ կողմը զրկուած ֆօ-
միսէրք ամենէն աւելի արտօնութիւն
ու իշխանութիւն պիտի ունենային,
և թէ մեծ գործի համար մեծ գոր-
ծիք պէտք էր :
Արդ՝ մեք ասոր ճիշդ հակառա-
կը կը տեսնեմք :
Մինչդեռ Եռսուֆ փաշան ինք-
նին կը յայտարարէ թէ գործադրու-
թեան արտօնութիւն չունի, Տիար-
աքէրի ֆօմիսէրները, թէ և ոչ բո-
լորովին նախանձելի վիճակի մէջ,
այսու ամենայնիւ գործելու աւելի
ազատութեան մէջ կը տեսնեմք : Ա-
յլ ասին փաշան Տիարաքէրի մէջ
բաղմամբ Գիւրգ պէյեր կը բռնէ,
և համառօտ արդարութեան գրու-
թեամբ զանազ մինչև Ալպանիա
կ'աքսորէ, թէ և յետոյ կը լսեմք թէ
նոքա Սլաւոնիան Հայէպի ապարանաց

մէջ, իսկաքսորն իրենց հաշմանքուն
քով կը դառնան : Կարնոյ նահանգին
մէջ ֆիւրդերն ոչ նուազ չարագոր-
ծութիւն ըրած էին. ինչ ըրին, կամ
աւելի ճիշդ խօսելով, ինչ կըցին
ընել Եռսուֆ փաշան և Աղաբէկեան
էֆէնդիին :
Միևնոյն Ալպանի փաշան, նոր
ոստիկանութեան (ժամատարներէ) հար-
կը ճանչած ին պէս, իսկալի պայն իւր
անօրէնութեան ներքեւ կազմել տալ,
թէ և փօքը թուով, և Պայրամին օրն
անոնց հանգէս մ'ալ ընել կուտայ,
մինչդեռ անգին Հայաստանի խեղճ
ֆօմիսէրք ուրիշ բան չընելով, իրենց
արուած հրահանգաց համեմատ Բ.
Գրան Էքէքէ Բէ հաշմէ ոստիկանութիւն
մը կազմել կարնոյ և վանայ նահան-
գաց մէջ, և նկատողութեան արժա-
նի է որ մինչդեռ Տիարաքէրի նա-
հանգին մէջ քիչ չաա Խառն ոստիկա-
նութիւն մը կազմուի, մեք տակա-
ւին չեմք լսած թէ կարնոյ մէջ Հայ-
ազգի ոստիկաններ չընդապել ոկսած
լինին : Վերջապէս, այս միևնոյն Ա-
լպանի փաշան և իւր պաշտօնակից
Մանաս Էֆէնդիին քիչ ժամանակի մէջ
բաւական հաշմաքէ իշխանութիւն կը
ցուցնեն, բարձրաստիճան պաշտօնու-
տարներ պաշտօնակի կընեն, և ա-
նոնց տեղ նորեր կը դնեն, թէ և, թը-
րօթիմը Հայաքարպետին տեղեկագ-
րաց նայելով, վերջնոց մէկ մասն ա-
ռաջիններէն լուսագոյն մարդիկ չեն
եղեր :
Կը հետեւնեմք ուրեմն թէ մինչ-
դեռ Հայաստանի ֆօմիսէրները գոր-
ծադրութեան իշխանութիւն բնաւ
չունէին, Տիարաքէրի ֆօմիսէրները
մինչև աստիճան մ'ունէին այդ իշ-
խանութիւնը :
Արդ, եթէ երբեմն դանդաւա-
ւած է Տիարաքէրի նահանգին ֆօ-
միսէրներէն թէ գործադրութեան
մասին աւելի ընդարձակ իշխանու-
թիւն չունէին, ո՞րքալ աւելի պէտք
է դանդաւոր կարնոյ և վանայ նա-
հանգաց ֆօմիսէրներէն, որք առաջ-
նոց ունեցած իշխանութիւնն անգամ
չունէին, մինչդեռ ընդհակառակն՝
աւելի մեծ պիտոյից տուչի կը դառնը-
ւէին :
(Ծառանկէ)

ՀՆՈՒՍԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 11 նոյն

Լոնտոնի լրտ բազմաթուական ընտ-
րութեան ասթիւ Արկադի տարեկան
կոչունքն երէկ տեղի ունեցաւ :
Լրտ Արքեպիսկոպոս Գաղաքապետ լր-
տին բանախօսութեանը սրտատխտանով
որ տառչին նախաբարին աշխարհավա-
րութիւնը դաւած էր, նախ Անգլիոյ ներ-
քին կացութեան վրայ խօսեցաւ. և անց-
գիտական կառավարութեան գործադրած
և գործադրելը բարենորոգումներն յի-
շեց : Այս ասթիւ լրտ Արքեպիսկոպոս զո-

